ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«__» «_____» 2022 թվականի N ___ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 7-Ի N 1038-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հուլիսի 7-ի ««Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում վերաբաշխում, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի N2121-Ն որոշման մեջ փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին» N 1038-Ն որոշման՝

1) 3-րդ կետի 1-ին ենթակետում «մեկամսյա ժամկետում» բառերը փոխարինել «երկամսյա ժամկետում» բառերով,

2) N 5 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

ա) 1-ին կետում «Վթարային բնակելի տների հասցեները» սյունակի «24» թիվը փոխարինել «28» թվով,

բ) 4-րդ կետում «Աջակցություն ստացողի անունը, ազգանունը, հայրանունը» սյունակի «Արամի» բառը փոխարինել «Միսակի» բառով, «Անձնագրային տվյալները» սյունակի «AM0559067» տառերը և թվերը փոխարինել «AV0387414» տառերով և թվերով,

գ) 7-րդ կետում «Աջակցություն ստացողի անունը, ազգանունը, հայրանունը» սյունակի «Զվարթ» բառը փոխարինել «Զվարդ» բառով,

դ) 13-րդ կետում «Աջակցություն ստացողի անունը, ազգանունը, հայրանունը» սյունակի «Իսրայելյան Հայրիկ Սուրեն» բառերը փոխարինել «Իսրաելյան Հայրիկ Սուրենի» բառերով։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ
Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան